

Հաշվետվություն

Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան
աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ



Բյուրեղավան 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՏԱՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ),.....	4
Ընդհանուր համայնքային ոլորտ.....	4
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտ	4
Տրանսպորտի ոլորտ.....	5
Կրթության ոլորտ	5
Մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտ.....	5
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտ	5
Սոցիալական պաշտպանության ոլորտ.....	5
Շրջակա միջավայրի պահպանության ոլորտ.....	6
Զբոսաշրջության ոլորտ	6
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	8
Հավելված 1.....	8
Հավելված 2.....	10

Ներածություն

Սույն հաշվետվությունը մշակվել է համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող ԽՄ-ի կողմից՝ ՀՀ ՏԿԶՆ, ԳՄՀԸ աջակցությամբ ՀՖՄ-ի կողմից իրականացվող «Բազմաբնակավայր համայնքների տարեկան աշխատանքային պլանների (ՏԱՊ-երի) մշակում և կառավարում» ծրագրի շրջանակներում:

Հաշվետվությունը հասցեագրված է Բյուրեղավան բազմաբնակավայր համայնքի ՏԽՄ-երին, աշխատակազմին, համայնքային կազմակերպություններին, բնակիչներին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպություններին և խմբերին, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց:

ՏԱՊ-ի իրականացման վերաբերյալ **հաշվետվության** մեջ ներկայացված են՝ ՏԱՊ-ի իրականացման վերլուծությունը (ըստ ոլորտների) և մոնիթորինգի արդյունքում արված եզրակացությունները և առաջարկությունները:

Հավելված 1-ում ներկայացված է համայնքի 2018թ. ՏԱՊ-ի ծախսերի կատարողականը (ըստ ոլորտների և ծրագրերի): **Հավելված 2-ում** ներկայացված է տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված ծրագրերի արդյունքային ցուցանիշների տարեկան մոնիթորինգի վերաբերյալ:

Համայնքի 2018թ. ՏԱՊ-ի իրականացման վերլուծություն (ըստ ոլորտների)

Բյուրեղավան համայնքի 2018թ. ՏԱՊ-ի ծրագրերի կատարողականը դիտարկելիս կարելի է տեսնել, որ նախատեսվածից առկա են որոշակի շեղումներ: Ընդ որում, ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների դիտարկելիս, կարելի է նկատել, որ առկա են պլանների որոշ գերակատարումներ (Հավելված 2): Ստորև ներկայացված է ըստ առանձին ոլորտների իրականացված ծրագրերի ամփոփ նկարագրությունը:

Ընդհանուր համայնքային ոլորտ

Ոլորտում ՏԱՊ-ով նախատեսվել է իրականացնել «Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում» ծրագիրը, որում ըստ տարեկան ճշգրտված պլանի նախատեսվել են 79605.0 հազար դրամի ծախսեր, բայց կատարվել են 68769.0 հազար դրամի ծախսեր, ինչի արդյունքում տնտեսվել են գումարներ: Կատարվել են որոշակի կադրային փոփոխություններ, բարելավվել են աշխատակիցների աշխատանքային պայմանները: Ծրագիրն ընթանում է բնականոն հունով: Սպասարկման ծառայությունների որակի բարձրացման համար շեշտադրվել է աշխատակազմի կարողությունների բարձրացումը:

Պատշաճ կերպով գործել են համայնքապետարանի պաշտոնական և համայնքային համացանցային կայքերը, շահագործվում է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը»: Համայնքի պաշտոնական, համայնքային համացանցային կայքերի և սոցիալական ցանցի առկայությունը (byureghavan-kotayk.am. և byureghavan.am, [Բյուրեղավան համայնք ֆեյսբուքյան էջ](#)) հնարավորություն է տալիս ավելի արագ և արդյունավետ կազմակերպել աշխատանքները, համայնքի բնակիչները հնարավորություն ունեն կայքերի միջոցով ծանոթանալու համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններին, սպասարկման վճարներին, բյուջեից իրականացվող ծախսերին: Ծրագրի իրականացման ընթացքում եղել են որոշակի տնտեսումներ՝ կապված որոշ ապրանքատեսակների առավել մատչելի գներով ձեռք բերման, թափուր հաստիքների առկայության հետ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտ

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում 2018թ. ընթացքում համայնքի բյուջեի միջոցներից՝ ըստ տարեկան ճշգրտված պլանի, կատարվել են 28522.0 հազար դրամի ծախսեր, ինչով պայմանավորված համայնքի 2018թ. ՏԱՊ-ում ներառված քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտի ծրագրերն իրականացվել են լիարժեք : Սակայն՝ պուրակում ընթացող շինարարական աշխատանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել իրականացնել «Բյուրեղավան բնակավայրի հուշադրյալի կառուցումը, որը նախատեսվում է իրականացնել 2019 թվականին: Միաժամանակ աշխատանքներ են տարվել և պետական բյուջեից ստացվել են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար:

Տրանսպորտի ոլորտ

2018թ. ընթացքում համայնքում ճանապարհաշինության բնագավառում ծախսերի ծավալը կազմել է 18223.0 հազար դրամ: Ֆինանսական միջոցները բավարարել են ապահովելու համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման աշխատանքների իրականացումը: Ճանապարհների ընթացիկ վերանորոգման աշխատանքները իրականացվել են պատշաճ, ասֆալտապատվել են բակային տարածքներ , Ջրաբերի գյուղամիջյան ճանապարհներ:

Կրթության ոլորտ

Բյուրեղավան համայնքում 2018 թվականին գործել է 1 համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություն, 1 դպրոցահեն նախադպրոցական ուսումնական հաստատություն, իսկ համայնքի Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերում «Կայուն զարգացման նախաձեռնությունների Աստղացույթ» հասարակական կազմակերպություն – հանայնք համագործակցության արդյունքում ստեղծվել և գործում են Մոբայլ մանկապարտեզներ: ՆՈՒՀ-երի կրթական ծառայություններից օգտվել են 228 երեխաներ, իսկ արտադպրոցական դաստիարակության ծառայություններից՝ 300-ից ավել երեխաներ: Կրթության ոլորտի ծրագրերը տարեկան կտրվածքով ամբողջությամբ իրականացվել են ՏԱՊ-ով պլանավորված ցուցանիշներով, համայնքի բյուջեից կրթության բնագավառում ծախսերի ծավալը կազմել է 72351.3 հազար դրամ:

Մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտ

Համայնքում գործում է միայն 1 գրադարան՝ Բյուրեղավան բնակավայրում:

Ոլորտում իրականացվող միակ ծրագիրը «Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի բարելավումն» է: Գրադարանային ծառայություններից օգտվել են շուրջ 583 ընթերցողներ: Մշակույթի ոլորտում 2018թ. ընթացքում իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող տարաբնույթ միջոցառումներ՝ կապված ՀՀ ազգային և պետական տոների, հորելյանական նշանակության միջոցառումներ հետ: Բյուրեղավանի համայնքապետարանի աջակցությամբ միջոցառումներ են կազմակերպվել համայնքի բոլոր բնակավայրերում:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

2018 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում կատարվել է 5667.0 հազար դրամի չափով ծախսեր, սոցիալական աջակցություն են ստացել 131 ընտանիք: «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Մանկական զարգացման հիմնադրամ» ՀԿ- համայնք համագործակցության արդյունքում Բյուրեղավան համայնքի սոցիալապես անապահով 5 ընտանիքներ ստացել են աջակցություն: Ամերիկյան Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի և համայնքի

համագործակցության շնորհիվ Բյուրեղավան բնակավայրում գործում է բարեգործական ճաշարան, որի շահառու է հանդիսանում 164 անձ: Ոլորտում հիմնական շեշտը դրվել է բնակչության խոցելի խմբերին դրամական օգնությունների տրամադրման վրա:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտ

2018թ. ՏԱՊ-ին համապատասխան, համայնքի բոլոր բնակավայրերում ապահովվել են սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ, փողոցները մաքուր են, այգիներն ու պուրակները՝ խնամված: Համայնքում աղբահանության աշխատանքներն առավել արդյունավետ կատարելու նպատակով վերանայվել է աղբահանության գրաֆիկը, Բյուրեղավան համայնքում իրականացվել են կանոնավոր աղբահանության աշխատանքներ: Այս ոլորտում համայնքի բյուջեից ծախսվել է 69036.5 հազար դրամ:

Զբոսաշրջության ոլորտ

Ոլորտում 2018թ. ՏԱՊ-ով պլանավորվել էր իրականացնել 7000.0 հազար դրամի ներդրում, սակայն համայնքում կառուցվող պուրակի տարածքում հուշադրյուրի կառուցումը տեղափոխվել է 2019 թվական՝ պուրակում ընթացող շինարարական աշխատանքների պատճառով:

Եզրակացություններ և առաջարկություններ

Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի պլանի կատարումը դիտարկելիս, կարելի է տեսնել, որ համայնքի 2018 թվականի ՏԱՊ-ով սահմանված ծրագրերը 2018 թվականի ընթացքում իրականացվել են: Ծրագրերի իրականացման ընթացքը և ստացված արդյունքները դիտարկելիս, հստակ երևում է, որ համայնքում ծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցները ծախսվել են սահմանված նպատակներին համապատասխան, որոշ դեպքերում առկա են տնտեսումներ: Որոշ ծրագրեր անհնար է եղել իրականացնել՝ ժամանակի անբավարարության պատճառով:

Հիմնվելով սույն հաշվետվությունում կատարված վերլուծության արդյունքների և եզրակացությունների վրա՝ հիմնական առաջարկությունները հետևյալներն են՝

- ✓ Տնտեսված միջոցներն ուղղել համայնքի բնակավայրերում մատուցվող ծառայությունների ծավալի ավելացմանն ու որակի բարձրացմանը:
- ✓ Շարունակական աշխատանքներ իրականացնել համայնքում ինչպես մասնավոր հատվածի, այնպես էլ տարբեր դոնոր կազմակերպությունների կողմից միջոցներ ներգրավելու ուղղությամբ:
- ✓ Բնակչության հետ տանել ակտիվ բացատրական աշխատանքներ հարկերի հավաքագրման անհրաժեշտության և համայնքում իրականացվող ծրագրերի իրազեկման ուղղությամբ:
- ✓ ՏԱՊ-ում ներառված ծրագրերի յուրաքանչյուր միջոցառման նկարագրության, արդյունքային ցուցանիշների սահմանման և իրականացման ընթացքի վերլուծությունը իրականացնել համայնքապետարանի համապատասխան բաժինների կողմից, հետո նոր ամփոփել:

Հավելվածներ

Հավելված 1

Համայնքի 2018թ. ՏԱՊ-ի ծախսերի կատարողականը՝ ըստ ծրագրերի

Ցուցանիշներ	2018թ. ՏԱՊ -ի և տարեկան բյուջեի ճշգրտված պլանի (հազ. դրամ)	2018թ.ՏԱՊ-ի և տարեկան բյուջեի փաստացի (հազ. դրամ)	2018թ. ՏԱՊ-ի կատարողական, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ			
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում	79605.0	68769.0 /միջոցների փոխանցման աղյուսակ/	100%
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Ծրագիր 1.Բյուրեղավան բնակավայրի պուրակի կառուցապատում	34100.0	34100.0	100%
Ծրագիր 2.Բյուրեղավան բնակավայրի մշակույթի տան հիմնանորոգում	74135.8	51492.1 /միջոցների փոխանցման աղյուսակ/	100%
Ծրագիր 3. Բյուրեղավան բնակավայրի փողոցային լուսավորության իրականացում	4000.0	3278.6 /միջոցների փոխանցման աղյուսակ/	100%
Ոլորտ 5. Հողօգտագործում			
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Ծրագիր 1. Ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն	21200.0	19778.0 /միջոցների փոխանցման աղյուսակ/	100%
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
Ոլորտ 8. Կրթություն			
Ծրագիր 1. Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում	77013.4	72351.3 /միջոցների փոխանցման աղյուսակ/	100%
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Ծրագիր 1. Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի բարելավում	7360,0	6762,1 /միջոցների փոխանցման աղյուսակ/	100%
Ոլորտ 10. Առողջապահություն			
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
Ծրագիր 1. Աջակցություն համայնքի սոցիալապես	6112.0	5667.0	100%

անապահով բնակիչներին		/միջոցների ընտրաման աղյուսը/	
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ծրագիր 1. Համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	70050.0	69036.5 /միջոցների ընտրաման աղյուսը/	100%
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
Ծրագիր 1. Բյուրեղավան բնակավայրում հուշադրյուրի կառուցում	0	0	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			

Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Համայնքի 2018թ. ՏԱՊ-ում ներառված ծրագրի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը

Ոլորտ 1. Ընդհանուր					
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ. տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը	31	31	0	3 համայնքային ծառայության թափուր պաշտոն է եղել
Ելքային (քանակական)	Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, %	3	3	0	
Ելքային (որակական)	Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, %	90	90	0	
Ելքային (ժամկետայնության)	Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, օր	4	4	0	
Վերջնական արդյունքի	Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ	լավ	0	
Ծախսեր, հազ. դրամ	68769.0				

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ծրագիր 1. Փողոցային լուսավորության իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ. տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Առկա լուսավորության համակարգի	8	8	0	

	երկարությունը՝ կմ				
Ելքային (քանակական)	Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, (%)	60	60	0	
Ելքային (որակական)	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից , (%)	70	70		
Ելքային (ժամկետայնության)	Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը, ժամ	5	5	0	
	Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը, ժամ	4	4	0	
Վերջնական արդյունքի	Փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը տրանսպորտային միջոցների և հետիոտների համար՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ	լավ	0	
Ծախսեր, հազ. դրամ	3278.6				
Ծրագիր 2. Բյուրեղավան բնակավայրի պուրակի կառուցապատում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ. տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանությո ւն
Մուտքային	Բյուրեղավան քաղաքի պուրակի կառուցապատում	Բարելավել Բյուրեղավան քաղաքի բնակչության, հանգստի պայման-ները	Կառուցա պատման աշխատ անքները ավարտա կան փուլում են	0	
Ելքային (քանակական)					
Ելքային (որակական)					

Ելքային (ժամկետայնության)	2018 թվական	2018 թ. վերջ	2018թ. վերջ		
Վերջնական արդյունքի		Բյուրեղավան քաղաքի բնակչության հանգստի պայմանները բարելավելն է	Գեղեցիկ կառուցա պատված պուրակ		
Ծախսեր, հազ. դրամ	34100.0				

Ծրագիր 3. Բյուրեղավան բնակավայրի մշակույթի տան հիմնանորոգում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ.տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղ ումը	Մեկնաբանություն
Մուտքային	Բյուրեղավան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում	Ստեղծել պայմաններ Բյուրեղավան քաղաքի մշակութային առավել աշխուժացման համար	Հիմնանորո գման աշխատանք ները ավարտվել են	0	
Ելքային (քանակական)					
Ելքային (որակական)					
Ելքային (ժամկետայնության)	2016 թվական	2018թ. վերջ	2018թ. վերջ		
Վերջնական արդյունքի		Ռինենալ ժամանա- կակից, վերանորոգ- ված մշակույթի տուն	Առկա է հիմնանորոգ ված մշակույթի տուն		
Ծախսեր, հազ. դրամ	51492.1				

Ոլորտ 6. Տրանսպորտ
Ծրագիր 1. Ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն

Արդյունքային ցուցանիշները		2018 թ. տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Ներքնակավայրային ճանապարհների բարեկարգման աշխատանքներում ներգրավված տեխնիկայի քանակը	3	3	0	
Ելքային (քանակական)	Համայնքում տրանսպորտային ծառայություններ մատուցող կազմակերպությունների թիվը	1	1	0	
Ելքային (որակական)	Համայնքի բնակիչների բավարարվածությունը ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, տեղադրման, շահագործման և պահպանման ծառայությունից, (%)	60	60	0	
Ելքային (ժամկետայնության)	Ճանապարհների աղուկ և ավազուկ մշակման օրերի թիվը	45	45	0	
Վերջնական արդյունքի	Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, տեղադրման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ	լավ	0	
Ծախսեր, հազ. դրամ	19778.0				

Ոլորտ 8. Կրթություն					
Ծրագիր 1. Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ. տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն

Մուտքային	Բյուրեղավան բնակավայրի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատության շենք	1	1	0	
	Բյուրեղավան բնակավայրի թիվ 1 արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի գույքի միավորների թիվը	150	150	0	
Ելքային (քանակական)	ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների ընդհանուր թիվը	221	238	17	Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերում Մոբայլ մանկապարտեզների ստեղծումը
	Արվեստի դպրոց հաճախող երեխաների թիվը	235	250	15	Արվեստի դպրոցի կողմից տրվող կրթության որակով
Ելքային (որակական)	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից,	80%	90%	10%	Միջազգային փառատոնում Գրանտ Պրի մրցանակին արժանանալը
Ելքային (ժամկետայնության)	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման ժամաքանակը օրվա ընթացքում, ժամ	8	8	0	
Վերջնական արդյունքի	Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության վերաբերյալ՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ	լավ	0	
	Ծնողների կարծիքը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայության վերաբերյալ՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ	լավ	0	
Ծախսեր, հազ. դրամ	72351.3				

Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Ծրագիր 1. Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի բարելավում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ. տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Գրքային ֆոնդի ծավալը, կտոր գիրք	30000	30000		
Ելքային (քանակական)	Տարվա ընթացքում կազմակերպված մարզական մրցաշարերի թիվը	1	3	2	Իրականացվել ավելի շատ մրցաշարեր
	Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը	9	11	2	Մեծ ուշադրություն և հետևողականություն է ցուցաբերվում համայնքի մշակութային կյանքի աշխուժացմանը
Ելքային (որակական)	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող մշակութային ծառայություններից, %	90	70	20	Համայնքում կինոթատրոնի և թատրոնի բացակայության հանգամանքը
Ելքային (ժամկետայնության)	Գրադարանային ծառայությունների մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում, օր	273	273	0	
Վերջնական արդյունքի	Մատուցվող մարզական և մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրի բնակիչներին՝ այո, ոչ	այո	այո	0	
Ծախսեր, հազ. դրամ	6762,1				

Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն					
Ծրագիր 1. Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ. տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	-	-	-	-	-
Ելքային (քանակական)	Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը	578	578	0	

Ելքային (որակական)	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	60	60	0	
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականության վերաբերյալ բնակիչների կարծիքը, շատ վատ , վատ, բավարար, լավ, գերազանց	լավ	լավ		
Ծախսեր, հազ. դրամ	5667.0				

Ոլորտ 15. Ծրջակա միջավայրի պահպանություն					
Ծրագիր 1. Համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ.տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Աղբամանների թիվը	70	70		
Ելքային (քանակական)	Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսը, քմ	217000	217000		
Ելքային (որակական)	Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանություն և սանիտարական մաքրման ծառայությունից, %	80	80		
Ելքային (ժամկետայնության)	Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), օր	5	5		
Վերջնական արդյունքի	Մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն՝ այո,ոչ	այո	այո		
Ծախսեր, հազ. դրամ	69036.5				

Ոլորտ 16. Զբոսաշրջություն					
Ծրագիր 1. Բյուրեղավան բնակավայրում հուշադրյուրի կառուցում					
Արդյունքային ցուցանիշները		2018թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Հուշադրյուրի կառուցման համար կազմված նախագծանախահաշվային փաստաթղթեր	1	0		Ժամանակը չի բավարարել ծրագրի իրականացման համար: Ծրագիրը կիրականացվի 2019 թվականի ընթացքում:
Ելքային (քանակական)	Զբոսաշրջիկների թվի ավելացում, %	2	0		
Ելքային (որակական)	Բյուրեղավան բնակավայրի գրավչության մեծացում՝ այո, ոչ	այո	-		
Ելքային (ժամկետայնության)	Հուշադրյուրի կառուցման ժամկետը, օր	65	-	100%	
Վերջնական արդյունքի	Բնակիչների կարծիքը հուշադրյուրի կառուցման վերաբերյալ՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ			
Ծախսեր, հազ. դրամ	0				